ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

18.04.2013թ.
200-ի 7

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ե՞րբ, ի՞նչ իրավական ակտով, ու՞մ, ի՞նչ նպատակով, ի՞նչ իրավունքով (սեփականության իրավունքով, վարձակալության իրավունքով) եւ որքա՞ն ժամկետով է հատկացվել Փակ շուկան,
2. Խնդրում ենք տրամադրել Երեւան քաղաքի Մաշտոցի պողոտայի Փակ շուկայի հատկացման պայմանագրի պատճենը,
3. Կա՞ն արդյոք ճարտարապետահատակագծային առաջադրանքներ, քաղաքաշինական փորձաքննության եզրակացություններ եւ շինարարական թույլտվություններ Երեւան քաղաքի Մաշտոցի պողոտայի Փակ շուկայի շինարարություն իրականացնելու համար,
4. Եթե այո, ապա խնդրում ենք տրամադրել շինարարական աշխատանքների իրականացման հետ կապված վերոնշյալ բոլոր փաստաթղթերի պատճենները,
5. Անցկացվե՞լ են արդյոք հանրային լսումներ կամ քննարկումներ Երեւան քաղաքի Մաշտոցի պողոտայի Փակ շուկայի շինարարության վերաբերյալ: Եթե այո, ապա՝ ե՞րբ եւ ու՞մ մասնակցությամբ:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան